Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ա.Կարապետյան
(Պատվիրատուի ղեկավար անուն ազգանուն)

(ստորագրություն)

Արձանագրություն N 2

«ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԾՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Մասնագիտացված կազմակերպությունների կողմից/համակարգչային
ծառայությունների/ մատուցման)

ք. Երևան 09 փետրվարի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Ա.Փարսադանյան, Վ.Մանուկյան

1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. Մասնագիտացված կազմակերպությունների կողմից/համակարգչային ծառայությունների/ մատուցման մրցույթին մասնակցելու հրավերը 2018թ հրապարակվել է «gnumner.am» կայքի գնումներ կատարելու ԳՀ ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև www.armeps.am էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են 2018 թվականի փետրվարի 9-ին՝ ժամը 10:00-ին www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. www.armeps.am կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Մայ Քլաբ» ՍՊԸ	ք. Աշտարակ, Գիտավան 2, բն 3,

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

4. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Հ/Հ չափ.	Ապրանքի անվանումը	Նախահաշվով նախատեսված գումար	Գնային առաջարկներ	
			Մայ Քլաբ ՍՊԸ	
			Առանց ԱՄՀ	ԱՄՀ-ն ներառյալ
1	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից/համակարգչային ծառայությունների/ մատուցման	24000000	20538000	-

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

5 Տվյալներ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

5.1 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **Մայ Քլաբ ՍՊԸ**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատասխան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 5.2 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Ա. Փարսադանյան

_____ Գ. Սիմոնյան

_____ Վ.Մանուկյան